ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Մելիքյանի <<Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները>> ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքի մասին

Մեր օրերում՝ այսչափ զարգացած տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում, անփոխարինելի է լեզվակրթադաստիարակչական ոլորտում գործունեություն ծավալող անձանց դերը, հատկապես եթե վերջիններս անդրադառնում են այդ ոլորտի հիմնախնդիրներին ու դրանց լուծման եղանակներին, ուսումնառության գործընթացում առաջ եկած խոչընդոտների ներկայացմանն ու դրանց հաղթահարման ուղիներին: Անվիճելի է, որ կրթության ոլորտում աշխատող անձի հիմնական գործառույթը կրթական մեխանիզմների կատարելագործումն ու փորձարկումն է, այդ բնագավառում առկա հիմնախնդիրների բազմակողմանի ներկայացումն ու դրանց լուծումների փնտրտուքը. այդ ամենն արդիական ու հրատապ է այնքանով, որ ուղղակի կապ ունի ուսումնական գործընթացի արդյունավետության, ուսումնական կատարողականության բարձրացման, կրթական համակարգի արդիականացման հետ և, հիրավի, կարող է դասավանդման մեթոդաբանության մեջ առանցքային տեղ զբաղեցնել՝ ի նպաստ հայկական կրթության մրցունակության բարձրացման: Հասարակական զարգացման այս փուլում, երբ կարևորվում են միջանձնային հարաբերությունները, ուսանող-ուսանող, ուսանող-ծնող, ուսանող-դասախոս կապը, կրթադաստիարակչական ոլորտի ներկայացուցչի՝ մասնավորապես մանկավարժի առաքելությունն է կերտել ուսյալ ու առաքինի սերունդ: Կրթադաստիարակչական համակարգում ծառայողների մասնագիտությունն իհարկե սթրեսածին է՝ կապված այդ մասնագիտական գործունեության առանձնահատկություններից բխող ներկայացված պահանջների, բարձր մակարդակի ինքնատիրապետման, վերահսկման կարողությունների, տարբեր հոգեկերտվածքի տեր ուսանողների հետ աշխատելու ունակությունների հետ:

Հեղինակը, ուսումնասիրության ենթարկելով մեծածավալ մասնագիտական գրականություն, մասնավորապես՝ Վ. Լևելտի՝ խոսքի ակտում ճանաչողական գործընթացների ներգրավվածության մասին

համապարփակ տեսությունը և <<Հոգեբանության պատմություն. նախաշոմսկյան դարաշրջան>> աշխատությունը, Լ. Լ. Ս. Վիգոտսկու՝ <<Ներքին խոսք և ընթերցման գործընթաց>> աշխատությունը, ներքին խոսքի յուրահատկությունների ու գործառույթների մասին տեսությունները, Ա. Ա. Լեոնտևի՝ ներքին խոսքի մասին տեսությունը, Ա. Սոկոլովի՝ ընթերցանության ժամանակ ներքին խոսքի նվազեցման կամ կրճատման տեսությունը, Ջ. Միլլերի՝ խոսքի ծագման հոգեբանական փոխակերպման (տրանսֆորմացիոն) մոդելը, Ն. Ժինկինի՝ <<Խոսքի մեխանիզմները>> աշխատությունը, Ն. Չոմսկու՝ կարտեզյան լեզվաբանության՝ բերականության վերաբերյալ առաջադրած վարկածը, Վ. Հումբոլդտի՝ լեզվի յուրացման մասին տեսությունը, Ս. Կրաշենի՝ օտար լեզվի ուսումնասիրության, լեզվական ներդնման ու արդյունքի (input & output) և կամային ընթերցանության վերաբերյալ տեսությունները, իրավացիորեն հանգել է այն եզրակացության, որ լեզվի մետաճանաչողական կողմը բավականին ուսումնասիրված թեմա է օտար լեզվի ուսումնառության գիտակարգում, ինչը չի կարելի ասել լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական կողմի մասին: Հեղինակն իրավացիորեն փաստում է, որ օտար լեզվի մետաճանաչողական կողմի հիմնախնդիրներին անդրադարձած հեղինակների տեսությունները չափազանց օգտակար են օտար լեզվի տիրապետման տիրույթում սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների դիտարկման համար, սակայն բավարար չեն օտար լեզվի յուրացման բազմակողմանի ու համապարփակ գործընթաց ապահովելու համար: Հեղինակը նկատել է, որ լեզվի մետաճանաչողական կողմի վրա շեշտն այնքան մեծ է, որ թերի է կամ բավարար ուշադրություն հատկացված չէ լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական կողմին, քանզի հեղինակը ճշտորեն շեշտում է, որ օտար լեզվի յուրացումը պետք է ընթանա լեզվամետաճանաչողության հոգեբանական գործունեության մեջ: Ուստի ատենախոսը ուշադրության կիզակետում է պահել ներքին և արտաքին դրդապատճառի, դիրքորոշման (ատիտյուդի), տագնապի, սոցիալական համատեքստի, մշակութային առանձնահատկությունների ուղղակի ազդեցությունն օտար լեզվի ուսումնառության գործընթացի վրա, պատշաճ կերպով ներկայացրել է լեզվի ուսումնառության գործընթացում ուսուցման ու դասավանդման առավել տարածված, ինտերակտիվ մեթոդների ու ոճերի թերությունները ու

առավելությունները՝ պայմանավորված ուսանողների հոգեկերտվածքով, մշակել է ամսագրային, հանդեսների ու ակնարկների ոճով հետաքրքիր նյութեր, կազմել հարցաթերթեր աֆֆեկտիվ գործոնների գնահատման նպատակով, ցուցադրել նոր՝ բլոգային մեթոդ ուսանողների վերլուծաքննադատական և ստեղծագործական ներուժի դիտարկման ու զարգացման համար, ներկայացնել բաղաքաքնտեսական, կրոնական և մշակութային առանձնահատկություններ, որոնք մեծապես փոխում են օտար լեզվի ուսումնառության ընթացքը: Ատենախոսը հաջող կերպով օտար լեզվի ուսումնառության գործընթաց է ներմուծել Քննադատական մտածողության հիմնադրամի առաջադրած հոգեբանական բնույթի մեխանիզմներ՝ փորձելով դրանք միաձուլել լեզվի ուսումնառության գործընթացին: Ատենախոսը նպատակ է հետապնդել անդրադառնալ լեզվի ուսումնառության գործընթացում սոցիալական համատեքստի կարևորությանը, վերլուծաքննադատական ու ստեղծագործական ներուժի բացահայտմանն ուղղված առաջադրանքներին:

Աշխատանքի տեսական հիմքը կազմում են Լ. Ս. Վիգոտսկու՝ ներքին խոսքի շարահյուսական և իմաստաբանական կողմերի մասին տեսությունները, հոգելեզվաբանության առաջամարտիկներ Դ. Տիեդմանի, Վ. Հումբոլդտի, Հ. Շտեյնտալի, Վ. Վունդտի՝ լեզվի արտաբերման մեջ մտավոր գործընթացների մասին էմպիրիկ տեսությունները, Ա. Բադելեյի, Ն. Թոմսոնի և Մ. Բուչանանի՝ ներքին խոսքի մասին հիմնավորված ուսումնասիրությունները, Ա. Սոկոլովի՝ ընթերցանական առաջադրանքների ժամանակ ներքին խոսքի գործառույթների վերաբերյալ վարկածը, Ս. Կրաշենի՝ օտար լեզվի ուսումնասիրության մասին տեսությունը, Լ. Վիգոտսկու՝ "Մտածողությունը և խոսքը" աշխատությունը, Ա. Ա. Լեոնտևի՝ "Լեզու, խոսք, խոսքային գործունեություն" աշխատությունը, Ն. Ժինկինի՝ "Խոսքի մեխանիզմները" աշխատությունը, Ա. Ն. Լեոնտևի "Գործունեություն, գիտակցություն և անհատականություն" աշխատությունը, Ռ. Գարդների՝ օտար լեզվի ուսումնառության գործընթացում դրդապատճառի, դիրքորոշման ու տագնապի մասին տեսությունները, և այլոց աշխատանքներ:

Հետաքրքրական է հեղինակի վերլուծություններն ու ուսումնասիրության արդյունքները հայ և ֆուվեյթցի ուսանողների՝ աֆֆեկտիվ գործոնների հարցաթերթային չափման վերաբերյալ՝ մատնանշելով

նրանց միջև եղած տարբերությունները, տարբերվող է ներքին խոսքի և դրա չափման միավորի վերաբերյալ հեղինակի տեսակետը: Բլոգային և ամսագրային ուսումնասիրություններն ու դրանց վերլուծությունները ևս հետաքրքիր տեղեկատվություն են պարունակում:

Հեղինակի կողմից իրականացված զանազան տեսական - մեթոդաբանական վերլուծությունները թույլ են տալիս օտար լեզվի ուսումնասիրության տիրույթում առկա գիտական ձեռքբերումներն էլ ավելի հարստացնել՝ ընդգրկելով այդ գործընթացի անբակտելի մաս կազմող սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրների ընդլայն հեռապատկերը: Կարելի է ասել, որ սույն ատենախոսությունն օտար լեզվի տիրույթում լեզվի սոցիալ-հոգեբանական կողմին առնչվող համալիր և ամբողջընկալական մոտեցման առաջին փորձն է հայերեն լեզվով, որով որոշակիացվում ու ընդլայնվում են օտար լեզվի ուսումնառության գործընթացի սոցիալ-հոգեբանական կողմի սահմանները:

Ատենախոսական աշխատանքի տիրույթում հետազոտվողների խմբի մեջ ներառվել են Փուվեյթի՝ Միջին Արևելքի ամերիկյան համալսարանի, Ուրարտու համալսարանի և ԵՊՀ-ի ռոմանո-գերմանական ֆակուլտետի 1-3 կուրսի ուսանողները (320 հոգի). ուսումնասիրությունը կատարվել է նկարագրական մեթոդով՝ մեծ մասամբ կիրարկվել է դիտման մեթոդը, հարցաթերթերն ու զրույցը:

Իրականացված մեծ հետազոտական աշխատանքի շնորհիվ նորովի ներկայացվել է լեզվի սոցիալ-կրթական մոդելը, վերհանվել լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական կողմի առանձնահատկությունները, և, ամենակարևորը, խնդիրների մեծ մասի համար առաջարկվել են լուծումներ:

Սույն ատենախոսության տվյալները միանշանակ կիրառելի են ուսումնական գործընթացի երկու կողմերի համար էլ, կարող են օգտագործվել օտար լեզվի դասավանդման ավելի արդյունավետ մոդելների մշակման նպատակով, թրեյնինգների ու զրույցների ժամանակ: Հիրավի, իրականացված աշխատանքը որոշակի ներդրում է հոգեբանական գիտակարգում:

Այնուամենայնիվ, առկա են որոշ խնդրահարույց հարցեր, որոնց պատասխանները և հիմնավորումները կցանկանայինք լսել:

Մասնավորապես՝

1.Աշխատանքն առավելապես կշահեր, եթե բացատրվեր և հիմնավորվեր ընտրանքի ձևավորման սկզբունքները, այն ինչ ներկայացված է, կարող է վիճահարույց լինել:

2.Ներքին խոսքի մասին տեսությունները կրկնվում են առաջին և երկրորդ գլուխներում:

3. Համոզիչ չեն 103-114 էջերում մեկնաբանված ստեղծագործական ու քննադատական ներուժի գնահատման նպատակով ստեղծված բլոգային ու ամսագրային նորույթները:Չնայած դրանց հանգամանալից վերլուծությանը՝ չի նշվում դրանց բուն նպատակն ու վարկածի ապացուցմանն ուղղված միտվածությունը: Ակնարկներում ևս բացակայում է անմիջական կապը վարկածի ապացուցելիության հետ (հավելված 6):

4.Հստակեցված չէ էջ 74-ում կատարված ուսումնասիրության մեջ ներկայացված երեք հոգեբանական փոփոխականների և դասավանդման մեթոդների միջև փոխկապակցվածությունը. ինչ հիմքերով եք դրանք նույնացրել. աղյուսակներում այդ փոխկակվածությունը չի երևում:

5.Ատենախոսության հավելվածներում ներկայացված չեն դիտման և հարցազրույցի մեթոդների կառուցվածքը՝ նպատակը, ժամանակահատվածը, հարցերի կառուցվածքային և թեմատիկ հերթականությունը:

6.Աշխատանքում առկա են նաև բազմաթիվ տեխնիկական և լեզվական խնդիրներ:

Եզրակացություն

Լիլիթ Մելիքյանի <<Օտար լեզվի ուսումնառության սոցիալ-հոգեբանական հիմնախնդիրները>> ԺԹ.00.03 Սոցիալական հոգեբանություն մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն, ամբողջական աշխատանք է, նրա

արդյունքները կիրառելի են սոցիալ-հոգեբանական շեշտադրմամբ օտար լեզուների ուսուցման գործընթացում: Ատենախոսությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի Գիտական աստիճանների շնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ նրա հեղինակը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պատասխանող՝

հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նաիրա Հակոբյան

Նաիրա Հակոբյանի ստորագրությունը

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Գիտությունների ազգային ակադեմիայի

գիտակրթական միջազգային կենտրոնի գիտքարտուղար՝

Մ. Սարգսյան